Modern Psychology Scientific Bulletin, 2024, 1(14)

P-ISSN 2579-2504
E-ISSN 2738-2664

ԱՐԴԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

MODERN PSYCHOLOGY
SCIENTIFIC BULLETIN

АКТУАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ
НАУЧНЫЙ ВЕСТНИК

ԵՐԵՎԱՆ 2024, №1 (14)

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2024.7.1.035

EXPLORING THE RELATIONSHIP BETWEEN KING'S CHARACTERISTICS AND EMOTIONAL WELL-BEING IN ARMENIAN FAIRY TALES

Elina Asriyan (Yerevan State University, Yerevan, Armenia)

elina.asriyan@ysu.am

Received: 20.01.2024

Revised: 29.04.2024

Accepted: 29.04.2024

Our research shows that fairy tales can be considered as a source of formation of primary social beliefs formed in society about objects, people, relationships, trust, well-being and other phenomena. The purpose of this article is to investigate and study the description of the king's (as a leader) characteristics in the Armenian fairy tales, as well as to investigate the coefficient of emotional wellbeing of the fairy tales. Research data suggests that there is a connection between a leader's positive image and emotional well-being.

Keywords: *fairy tale, wellbeing, emotion, king, image, leader.*

Մեր կողմից կատարված հետազոտությունները փաստում են, որ հեքիաթները կարող են դիտարկվել որպես առարկաների, մարդկանց, փոխհարաբերությունների, վստահության, բարեկեցության և այլ երևույթների ու ֆենոմենների վերաբերյալ հասարակության մոտ ձևավորված առաջնային սոցիալական պատկերացումների ձևավորման աղբյուր: Քանի որ պատկերացումները երևույթների մասին շատ հաճախ պայմանավորում են մարդկանց դիրքորոշումներն ու վարքը՝ անձի մոտ սոցիալապես ցանկալի և արդյունավետ դիրքորոշումներ ձևավորելու և վարքը կանխատեսելու համար բազմաթիվ այլ գործոնների շարքում անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց ձևավորման աղբյուրները:

Տվյալ հոդվածի **նպատակն է** հետազոտել հայկական հեղինակային հեքիաթներում առկա թագավորի՝ որպես առաջնորդի, կերպարի նկարագրությունը, ինչպես նաև հետազոտել հեքիաթների բարեկեցության գործակիցը:

Հիմնական հետազոտական **խնդիրներն** էին.

Ընտրել հեղինակային հեքիաթները և հետազոտել դրանք կոնտենտ-վերլուծություն մեթոդի միջոցով՝ նախապես առանձնացված կատեգորիաների հաշվարկի համար:

Հեքիաթի հուզական բարեկեցության գործակցի հաշվարկման մեթոդիկայի մշակում:

Հեքիաթի հուզական բարեկեցության գործակցի և թագավորի նկարագրված կերպարի միջև հնարավոր կապի դուրս բերում:

Փուլ 1՝ Ինչպես նշված էր «Հեքիաթը՝ որպես առաջնորդի վերաբերյալ պատկերացումների ձեվավորման գործոն» հոդվածում (Ասրիյան, 2021)՝ հետազոտություն 1-ին փուլում ընտրվել են Հ.Թումանյանի 25 հեքիաթները, որոնք ենթարկվել են կոնտենտ-վերլուծության: Հ.Թումանյանի հեքիաթների ընտրությունը որպես հետազոտության օբյեկտ պայմանավորված էր փորձագիտական հարցման արդյունքում ստացված տվյալներով, որոնց համաձայն Հայաստանում ապրող հայերի շրջանում ամենատարածված և երեխաներին ամենահաճախ ընթերցվող հեքիաթները Հ.Թումանյանի հեքիաթներն էին: Կոնտենտ-վերլուծության մեթոդով վերլուծության են ենթարկվել նաև Ղ.Աղայանի հեքիաթները, որոնք փորձագետների կողմից դիտարկվում էին որպես երեխաների կողմից առավել շատ ընթերցվող հեքիաթները Հ.Թումանյանի հեքիաթներից հետո, և որոնք, հետևապես, ևս կարող էին ազդեցություն ունենալ երկրի ղեկավարի կերպարի վերաբերյալ ենթագիտակցական կարծրատիպային պատկերացումների ձևավորման համար: Առանձնացվել են կոնտենտ-վերլուծության հիմնական բովանդակային կատեգորիաներ՝ «թագավոր», «թագուհի», «թագավորի տղա», «թագավորի աղջիկ», «իշխան»: Բոլոր կատեգորիաները փոխբացառող էին և ընտրվել են որպես երկրի ղեկավարի, առաջնորդի կերպարի դրսևորում: Տվյալ հոդվածի շրջանակներում ներկայացնում ենք երկու հեղինակների հեքիաթների համեմատական վերլուծությունը ըստ առանձնացված կատեգորիաների:

Աղյուսակ 1 Թագավորի բնութագրիչների համեմատական վերլուծություն Հ.Թումանյանի և Ղ.Աղայանի հեքիաթներում

N	Թագավորի բնութագրիչները Հ.Թումանյանի հեքիաթներում	Թագավորի բնութագրիչները Ղ.Աղայանի հեքիաթներում	Բնութագրիչների հանդիպման հաճախականությունը
1.	Խաբեբա	Ազնիվ	3 /2
2.	Ագահ/աղքատից խլող	Աղա/առատաձեռն	2 /2
3.	Խաբեությամբ թագավոր դարձած	Ի սկզբանե ենթադրվում է լեգիտիմությունը	2 /2
4.	Չտես	-	2 /0
5.	Վախկոտ	Անվախ	2 /2

6.	Առանց արժանիքների, բայց բախտավոր	-	2 /0
7.	Դաժան	Բարի	1 /2
8.	Հասարակական կարծիքը կարևորող	Այլոց կարծիքը կարևորող	1 /1
9.	Տրիքստեր	Իմաստուն, արդար	1 /3

Ինչպես երևում է կոնտենտ-վերլուծության մեթոդով ստացված արդյունքնե–րից և դրանց համեմատական վերլուծություից երկու հեղինակների հեքիաթները կառուցում են առաջնորդի միանգամայն տարբեր կերպարներ՝ տարբեր բնութագրիչներով, և դրանց կատեգորիզացիաներ երկու տարբեր արքետիպերի ներքո. 1.Տրիքստերի կերպար, 2.Իմաստուն թագավորի կերպար:

Տվյալ հետազոտական փուլի հիմնական երկու եզրակացությունները հետևյալն են.

Ի սկզբանե հայ էթնիկ ենթագիտակցության մեջ առկա է առջնորդի վերաբերյալ երկու հակասական կարծրատիպային պատկերացում՝ հերոսի՝ Աղայանի հեքիաթներում, և հակահերոսի՝ Թումանյանի հեքիաթներում:

Թագավորի տղան՝ որպես հաջորդ առաջնորդի կերպար, երկու դեպքում էլ ընկալվում է որպես միանշանակ դրական բնութագրիչներով օժտված:

Փուլ 2՝ Հետազոտության երկրորդ փուլում մեր կողմից իրականացվեց նույն երկու հեղինակների՝ Հ.Թումանյանի և Ղ.Աղայանի, հեղինակային հեքիաթների վերլուծությունը, սակայն այս անգամ տվյալ հեքիաթների սյուժեի բարեկեցու–թյան գործակիցը դուրս բերելու խնդիրը լուծելու համար: Խնդիրը բավականին բարդ էր, քանի որ հետազոտական պրակտիկայում մեզ չի հանդիպել որևէ գործիք, մեթոդ կամ բանաձև, որը հնարավորություն էր տալիս աշխատել տեքստի հետ նման կոնտեքստում, վերլուծել այն և դուրս բերել նրանում առկա ընդհանուր բարեկեցության ցուցանիշ: Նմանատիպ գործիքի առկայությունը հնարավորու–թյուն կտար աշխատել ցանկացած տեքստի հետ: Մենք դիմեցինք գրականության վերլուծությանը և բարեկեցության վերաբերյալ առկա բազմա–թիվ հոդվածներին և տեսություններին, մասնավորապես Ն.Բրադբուրնի տեսակետներին, որը և ՀԲ վերաբերյալ ուսումնասիրությունները կատարող առաջին հեղինակներից էր: Հեղինակի կողմից ՀԲ (PWB psychological well-being) դիտարկվում էր իբրև պոզիտիվ և նեգատիվ հույզերի բալանս, որը ձևավորում է երջանկությունը (Bradburn N.M., 1969): Նմանատիպ կոնցեպտ առաջարկված է եղել Բ.Ի.Դոդոնովի կողմից (Dadonov, 1978), որը երջանկությունը դիտարկում էր իբրև տարբեր վալենտականություն ունեցող՝ նեգատիվ և պոզիտիվ, հույզերի որոշակի հարաբերակցություն (Bradburn N.M.,; Diener E):

Տվյալ փուլի համատեքստում մենք փորձել ենք լուծել հեքիաթի տեքստից դրա բարեկեցության գործակցի դուրս բերման հետազոտական խնդիրը: Խնդիրը լուծելու համար մենք իբրև տեսամեթոդական հիմք ենք դիտարկել Ն.Բրադբուրնի և Կ.Իզարդի տեսակետները բարեկեցության կառուցվածքի վերաբերյալ: Վերոնշյալ գիտնականների տեսությունները, մասնավորապես նրանց գաղափարները այն մասին, որ բարեկեցությունը կառուցվում է ապրվող դրական և բացասական հույզերի գնահատման բալանսից և հարաբերությունից հնարավորություն տվեցին դուրս բերել հուզական բարեկեցության գործակցի բացահայտման բանաձևը: Մասնավորապես, տեքստերում հուզական բարեկե–ցության գործակցի հաշվարկի համար մենք առաջարկում ենք հիմնվել հետևյալ բանաձևի վրա, որը հիմնված է Կ.Իզարդի կողմից սահմանված դրական և բացասական հույզերի խմբավորման և դասակարգման վրա ՝

ՀՀԲԳ = (Հ1 + Հ2 + Հ3 + Հ9 + Հ10) / (Հ4 + Հ5 + Հ6 + Հ7 + Հ8) ,

ՀՀԲԳ – հեքիաթներում ՀԲ գործակիցը

Հ, Հ2, Հ3… – համապատասխանում են աղյուսակում ներկայացված հերթականությանը:

Աղյուսակ 2 Կ.Իզարդի կողմից ներկայացված բազային հույզերը(by Izard's 1977 Theory)

1	Հետաքրքրություն	Interest
2	Ուրախություն	Joy
3	Զարմանք	Surprise
4	Տխրություն	Distress
5	Զայրույթ	Anger
6	Զզվանք	Disgust
7	Արհամարհանք	Shame
8	Վախ	Fear
9	Ամոթ	Shame
10	Մեղք	Guilt

Բանաձևի դուրս բերումից հետո իրականացվել են հետևյալ գործողություն–ները.

Հեքիաթների ընտրություն՝ ինչպես և առաջին փուլում դիտարվել են Հ.Թումանյանի և Ղ.Աղայանի նույն հեքիաթները:

Բովանդակային կատեգորիաների սահմանում: Որպես կատեգորիաներ սահմանվել են Կ.Իզարդի կողմից առանձնացված մնացած բազային հույզերը: Բոլոր կատեգորիաները և դրանց նկարագրությունը փոխբացառող էին:

Կոնտենտ-վերլուծություն սահմանված կատեգորիաների դուրս բերման համար:

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված են ստացված քանակական արդյունքները:

Աղյուսակ 3. Կոնտենտ-վերլուծության արդյունները

	Հեքիաթում նկարագրված հույզը	Հիշատակման հաճախականությունը Հ. Թումանյանի հեքիաթներում	Հիշատակման հաճախականությունը Ղ. Աղայանի հեքիաթներում
1	Հետաքրքրություն	1	12
2	Ուրախություն	14	33
3	Զարմանք	14	22
4	Տխրություն	21	22
5	Զայրույթ	17	12
6	Զզվանք	0	4
7	Արհամարհանք	0	0
8	Վախ	13	31
9	Ամոթ	3	6
10	Մեղք	2	3
ՀԲԳ	Հուզական բարեկեցության գործակից	0.66	1.1

Եթե ՀԲԳ ≥ 1, ապա հեքիաթի սյուժեն բարեկեցիկ է, եթե ՀԲԳ ≤ 1, ապա սյուժեն բարեկեցիկ անվանել չի կարելի.

Այսպիսով, մեր կողմից առաջարկվող բանաձևը հնարավորություն է տալիս նախնական հետևություն անել հեքիաթի ՀԲ գործակցի վերաբերյալ:

Հետազոտության հաջորդ փուլում մենք համեմատական վերլուծության ենք ենթարկել Թումանյանի հեքիաթները, որտեղ կա ՀԲ ցածր գործակից և առաջնորդի հակահերոսի բացասական կերպար և Ղ.Աղայանի հեքիաթները, որտեղ չափվել է ՀԲ համեմատաբար բարձր գործակից և առկա է առաջնորդի դրական կերպար.

Աղյուսակ 4 Առաջնորդի կերպարի կապը ՀՀԲԳ հետ

Հ.Թումանյանի հեքիաթներ		Ղ.Աղայանի հեքիաթներ	
ՀՀԲԳ	Առաջնորդի կերպարը	ՀՀԲԳ	Առաջնորդի կերպարը
0.66	Տրիքստեր/Հակահերոս	1.1	Իմաստուն արքա

Կատարված հետազոտության տվյալները հիմք են տալիս ենթադրել, առաջնորդի դրական կերպարի և հուզական բարեկեցության միջև առկա է որոշակի կապ: Նման հնարավոր կապի մասին խոսել են դեռևս Ֆ. Յանգը, ով

մատնանշում էր որ բարոյական համարվող մարդկանց ավելի հաճախ էր վերագրվում երջանկության հոգեբանական վիճակը [5]. Նման դիտարկումը իր հաստատումն է ստանում նաև կախարդական հեքիաթներում, որտեղ բարի և ազնիվ մարդիկ ձեռք են բերում հուզական և նյութական բարեկեցություն՝ որպես պարգևատրում:

Գրականություն

1. Հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգությունը: Ժողովրդական բանահյուսություն. Հասանելի է www.mincult.am/heritage/1/am/?nid=125
2. Асриян Э. Հեքիաթը՝ որպես առաջնորդի վերաբերյալ պատկերացումների ձեվավորման գործոն, Modern Psychology 4(1 (8)):14-21, DOI: 10.46991/SBMP/2021.4.1.014
3. Московичи С., Жодле Д. Социальное представление: феномены, концепт и теория // Соц. психология / под ред. С. Московичи. – СПб.: Питер, 2007. – С. 372–394.
4. Почебут, Л. Г., & Газогареева, Е. Н. (2014). Социальные представления о лидерстве. Вестник ленинградского государственного университета им. А.С. Пушкина, 5(1), 125-135.
5. Пропп В. Я., Исторические корни волшебной сказки. – Л.: Изд-во Ленингр. гос. ордена Ленина ун-та, 1986. - 364 с.
6. Уоттс А. Психотерапия. Восток и Запад.,М. 1997, с.32
7. Эльконин Д. [ELKONIN D.] Избранные психологические труды. — М.: Педагогика, 560 с., 1989.
8. Юнг К. Г., Душа и миф. Шесть архртипов/ К.Г. Юнг; Пер. А.А. Спектор. – Мн.: Харвест, 2004. – 400 с.
9. Bradburn N.M. The structure of psychological well-being. Chicago: Aldine, Chicago, 1969.
10. Diener E., SUH E., LUCAS R., et al. Subjective well-being: three decades of progress. Psychol Bull. 1999; pp.125:76–302. [Google Scholar].
11. Izard C. The many meanings/aspects of emotion: Definitions, functions, activation, and regulation. Emotion Review 2(4), 2010, 363–370. https://doi.org/10.1177/1754073910374661.
12. Yang, F., Knobe, J., & Dunham, Y. Happiness is from the soul: The nature and origins of our happiness concept. Journal of Experimental Psychology, 2021, General, 150 (2), 276–288. https://doi.org/10.1037/xge0000790.[доступ: 3.27.2021].

ИССЛЕДОВАНИЕ СВЯЗИ ХАРАКТЕРИСТИК ЛИДЕРА И ЭМОЦИОНАЛЬНОГО БЛАГОПОЛУЧИЯ В АРМЯНСКИХ СКАЗКАХ.

Элина Асриян (Ереванский Государственный Университет, Ереван, Армения)

Наши прошлые исследования демонстрируют, что сказки можно рассматривать как источник формирования первичных социальных представлений у людей о предметах, людях и взаимоотношениях с ними, доверии, благополучии и других феноменах и явлений. Целью данной статьи является исследование методом контент-анализа описаний в армянских авторских сказках характеристик царя как символа лидера, а также исследование коэффициента эмоционального благополучия сказок. Данные исследований показывают, что существует связь между положительными характеристиками и имиджем царя (лидера) и эмоциональным благополучием персонажей в сказке.

Ключевые слова: *сказка, благополучие, эмоция, имидж, царь, лидер.*

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ և ՀՈՒԶԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Էլինա Ասրիյան (Երևանի Պետական Համալսարան, Երևան, Հայաստան)

Մեր կողմից կատարված հետազոտությունները փաստում են, որ հեքիաթները կարող են դիտարկվել որպես առարկաների, մարդկանց, փոխհարաբերությունների, վստահության, բարեկեցության և այլ երևույթների ու ֆենոմենների վերաբերյալ հասարակության մոտ ձևավորված առաջնային սոցիալական պատկերացումների ձևավորման աղբյուր: Տվյալ հոդվածի նպատակն է հետազոտել հայկական հեղինակային հեքիաթներում առկա թագավորի կերպարի նկարագրությունը, ինչպես նաև հետազոտել հեքիաթների բարեկեցության գործակիցը: Կատարված հետազոտության տվյալները հիմք են տալիս ենթադրել, առաջնորդի դրական կերպարի և հեքիաթի պերսոնաժների հուզական բարեկեցության միջև առկա է որոշակի կապի մասին:

Հանգուցային բառեր՝ *հեքիաթ, բարեկեցություն, հույզ, կերպար, թագավոր, առաջնորդ:*

Information about the authors

Elina Asriyan - PHD, ass. Professor, vice-rector of Yerevan State University, Republic of Armenia, Yerevan, Armenia, elina.asriyan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

A. STEPANYAN, A. NADOYAN **CHARACTERISTICS OF THE MANIFESTATION AND EXHIBITION OF MUAY TAY ATHLETE'S STRESS RESISTANCE AND SELF-CONTROL BEHAVIOR**.....3

A. KHACHATRYAN **PERSONAL QUALITIES IMPORTANT FOR THE PROFESSIONAL ACTIVITY OF THE MODERN MIDDLE LEVEL MANAGER**..... 15

E. MURADYAN, M. MANUKYAN **SIGN-SYMBOL Ψ: CULTIVATING PROFESSIONAL IDENTITY AND PROFESSIONALIZATION IN PSYCHOLOGY EDUCATION** 23

E. ASRIYAN **EXPLORING THE RELATIONSHIP BETWEEN KING'S CHARACTERISTICS AND EMOTIONAL WELL-BEING IN ARMENIAN FAIRY TALES** 35

H. JIJYAN **WHAT CONTRIBUTES TO BETTER OVERALL EVALUATIONS WHEN APPLYING FOR A JOB? SOCIABILITY OR COMPETENCE? THE ROLES OF TRAIT AND WORK SETTING IN GAINING POSITIVE OVERALL EVALUATIONS.** 42

M. MKRTUMYAN, L. MKRTUMYAN **FEATURES OF PSYCHOLOGICAL REHABILITATION OF WOUNDED SERVICEMEN IN THE POST-WAR PERIOD** .54

N. ALAVERDYAN **CHANGES IN SOCIAL-PSYCHOLOGICAL BASIS OF THE MODERN SOCIETY IN THE CONDITIONS OF DEMOCRACY**.....66

S. POGHOSYAN, A. GEVORGYAN **STUDY OF THE INTERRELATON BETWEEN KNOWLEDGE OF PSYCHOLOGICAL SELF-REGULATION METHODS OF THE PERSON AND MINDFULNESS (EXAMPLE OF TEACHERS)**.....73

Հոդվածներին ներկայացվող պահանջները 86